«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն
Երեւան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

---

12.03.2021թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
Պարոն Համբարձում Մաթևոսյանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80
E-mail: grisha.balasanyan@hetq.am

Հարգելի պարոն *Մաթևոսյան,*

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին:

1. 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախում սանձազերծած պատերազմի ժամանակ Արմավիրի մարզի քանի՞ քաղաքացու գույք է վնասվել: Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների՝ նշելով գույքի տեսակը (մակնիշը):
2. Եթե կա 1-ին կետում նշված վնասված գույք, ապա վնասված գույքի դիմաց քաղաքացիները փոխհատուցում ստացե՞լ են: Եթե այո, նշել թե յուրաքանչյուրին ինչ չափով փոխհատուցում է տրամադրվել և ինչ վնասի դիմաց: Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների, գույքի տեսակի, վնասի չափի, փոխհատուցման գումարի չափի:
3. Վնաստված գույքն ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ կոնկրետ համայնքում գյուղատնտեսական կամ այլ աշխատանքների կազմակերպման վրա:

*Կանխավ շնորհակալություն* *Դիմող՝ Գ. Բալասանյան*